

Իւրաքանչիւր անհատ, իր բանականութենէն ելլելով, կը կազմէ մաքսիմներու ի՛ր անձնական կառոյցը: Մաքսիմներու կառոյցը սակայն, անհատէ անհատ կը տարբերի, որովհետեւ (ինչպէս տեսանք) մարդ զուտ բանական էակ չէ, այլեւ ան ունի որոշ հակումներ, որոնք անպայմանօրէն կ'ազդեն անոր բանականութեան վրայ՝ դրական կամ բացասական ձեւով: Այսուհանդերձ կարելի է *մաքսիմին* առարկայական (Objective) վաւերականութիւն մը տալ, երբ կարելի ըլլայ *մաքսիմը* ընդհանրականացնել եւ ան համընկնի *բարոյական օրէնքին* հետ: Այս գաղափարը, հետագային պիտի մանրամասնուի:

Կանտի համաձայն, բարոյական արժեւորման համար, *մաքսիմը*, կեդրոնական դեր կը խաղայ, որովհետեւ *պարտաւորութենէն բխած* վարմունքի մը բարոյական արժեքը ոչ թէ իր մտադրութեան մէջ կը կայանայ, այլ՝ *մաքսիմին* մէջ: Իսկ բարի կամքէն (Good Will) յառաջացած որեւէ *մաքսիմի* պիտանիութիւնը եւ ձգտումը կը կայանան իր ընդհանրականացման եւ ընդհանուր *բարոյական օրէնք* դառնալուն մէջ:

Մաքսիմներու անձնական կառոյցը առնչութիւն ունի նաեւ անհատի ինքնութեան (Identity) եւ նկարագրին (Character) հետ: Այլ խօսքով, անհատը իր անձնական կանոններու (մաքսիմ) հիման վրայ կ'ապրի ու ըստայնմ վարուելակերպ կը ցուցաբերէ, օրինակ իր խոստումը միշտ կը յարգէ, ուրիշներուն կ'օգնէ կամ ընդհանրապէս չի ստեր, եւայլն ... այս իմաստով կարելի է ըսել, որ անհատը խոստմնապահ, օգնելու միշտ պատրաստ կամ ճշմարտախօս է, եւայլն ...:

4. Ի՞նչ է՝ հրամայականը

Հայերէնի քերականութեան դասերէն գիտենք, որ բայերը նաեւ ունին հրամայական եղանակ, այսինքն՝ գործողութիւնը կը կատարուի հրամայական եղանակով, իր դրական կամ բացասական (արգելական) հրամայական ձեւերով, օրինակներ՝ ստէ՛, ստեցէ՛ք կամ մի՛ ստեր, մի՛ ստեք: Հրամայական եղանակի բայերը կ'ունենան միայն երկրորդ դէմք (եզակի ու յոգնակի) եւ միշտ շեշտակիր են:

Կանտ, լեզուական-քերականական այս հասկացութիւնը կը կիրարկէ իր բարոյական տեսութեան մէջ: Կանտի համաձայն հրամայականները բանաձեւեր են, որոնք կը ստիպեն, որ կամքը միայն բանականութեան հետեւի եւ ձերբազատուի զանազան հակումներու վատ կամ բացասական ազդեցութիւններէն: Հրամայականները հարկադրական կամ պարտադրական են եւ ցոյց կու տան բանականութեան առարկայական (Objective) օրէնքներու յարաբերութիւնը կամքին հետ, որ իր իւրայատուկ ենթակայական (Subjective) յատկութիւնը ունի եւ այս պատճառով ալ անհրաժեշտաբար չի հետեւիր հրամայականներուն: Եթէ մարդու վարմունքները միայն բանականութենէ յառաջացած ըլլային, ան պէտք պիտի չունենար հրամայականներուն, որովհետեւ հրամայականներու պահանջքը արդէն առկայ է՝ զուտ բանաւոր էակի *կամենալուն* մէջ: